

Կ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՅԻԿԵԱՆ, ՍԵՒԱՍՏԱՑԻ.— Ծ. 1867 ին. աչկ. Ս. Թարգմանչաց վարժ.ին Սերաստիոյ. 1885 էն սկսեալ վարած է ուսուցչական զանազան պաշտօններ: Ընդհ. պատերազմին ընտանեօք կը տարագրուի Սերաստիայէն Հալէպ, ուրկէ 1920 ին Երուսաղէմ կը հրաւիրուի ստանձնելու համար ժառ. վարժ.ի հայերէնի եւ պատմութեան դասերը. 1925 ին կը վախճանի Երուսաղէմի մէջ: Իր երկասիրութիւններն են.

— Բաղկիրժ Սեքասիոյ զաւտակաւ շեզուի (անտիպ). որ 1905 ին պսակուած է Իզմիրեանց մրցանակով.

— Հայ բուսաշխարհի (անտիպ). 1912 ին արժանացած նոյն մրցանակին ամբողջութեան.

— Եղեռնապատմ. (տպ. Պոսթօն, 1924):

Գարիկեանի ամբողջական կենսագրութիւնը տեսնել (Թեոդիկ, 1922, 1925 և 1926):

Մ

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ, ՎԱՆԵՑԻ.— Աչկ. Վանի ազգ. վարժարաններու. 1877-78 տեսուչ Ալիբ գիւղ վարժ.ին. 1879 ին փ. տեսուչ Վանի վարժապետանոցին Արարատեան Ընկերութեան կողմէն. 1882 ին փ. տեսուչ Միացեալ Ընկ. Տաւրոսի շրջանակին. 1884 ին օգն. ընդհ. տեսչի Հայաստանի վարժարաններուն. 1886 ին կը ձերբակալուի և կը բերուի Պոլիս. 1887 ին կը տարագրուի Երուսաղէմ, ուր ժառ. վարժ.ին մէջ կը դասախօսէ պոմ. եւ աշխարհագրութեան դասերը մինչեւ 1890 թուականը. 1890 ին ներուժով Վան կը դառնայ. 1895 ին դարձեալ կը հաստատուի Պոլիս. և 1898-1921 ին կրթական տեսուչ կը կարգուի Պոլսի վարժարաններուն. 1915 ին կը տարագրուի Փոքր Ասիա, ուրկէ կը դառնայ Զինագագարին. 1923 ին կը հաստատուի Փարիզ: Վարած է նաեւ վարչական պաշտօններ Պոլսի մէջ: Լուրջ յօդուածներով աշխատակցած է ազգ. թերթերու: